ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2084 - Ա **06 ապրիլի 2009թ.**

ԱՂՅՈՒՍԱԳՈՐԾՆԵՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 106 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈԶԱ ՍՐԱՊԻՈՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ՓԱՌԱՆԶԵՄ ԽԱՉԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ԽԱՉԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ՀՈՒՆԱՆ ԽԱՉԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ռոզա Սրապիոնի Հակոբյանի (ծնված 13.03.1949թ.), Փառանձեմ Խաչիկի Խաչատրյանի (ծնված 24.11.1969թ.), Կարեն Խաչիկի Խաչատրյանի (ծնված 03.04.1972թ.), Հունան Խաչիկի Խաչատրյանի (ծնված 05.02.1968թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Աղյուսագործների 2-րդ փողոցի հ.106 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 165.25քմ, որից 56.44քմ մակերեսով հողամասը Ռոզա Սրապիոնի Հակոբյանին, Փառանձեմ Խաչիկի Խաչատրյանին, Կարեն Խաչիկի Խաչատրյանին, Հունան Խաչիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (164.44քմ մակերեսով հողամասից օգտագործվում է 56.44քմ մակերեսով հողամասը): Օրինական հողամասին կից օգտագործվող 108.81քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1954 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման 15.05.2008թ. հ.2071ա, 21.01.2008թ. հ.304ա, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 28.03.2009թ. հ.20/2-Ե/127 գրությունները, 10.05.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 09.03.2009թ. հ.20-Ել-1615 եզրակացությունը, համաձայն որի Աղյուսագործների 2-րդ փողոցի հ.106 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Աղյուսագործների 2-րդ փողոցի հ.106 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Ռոզա Սրապիոնի Հակոբյանի, Փառանձեմ Խաչիկի Խաչատրյանի,

Կարեն Խաչիկի Խաչատրյանի, Հունան Խաչիկի Խաչատրյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 56.44քմ մակերեսով հողամասին կից 108.81քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 108.81քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. 2-րդ Աղյուսագործների փողոցի հ.106 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Աղյուսագործների 2-րդ փողոցի հ.106 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Ռոզա Սրապիոնի Հակոբյանի, Փառանձեմ Խաչիկի Խաչատրյանի, Կարեն Խաչիկի Խաչատրյանի, Հունան Խաչիկի Խաչատրյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Կենտրոն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա.Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ